

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.11.2020թ. թիվ 2011826901 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<27>> 01 2021թ. 7-13-

859

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե. Կարապետյանս, վերանայելով Աշոտ Կյուրեղյանի ՄԴ/163330-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կիևյան փողոցի 2Ա շենքի 21 բնակարանի բնակիչ Աշոտ Կյուրեղյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011826901 որոշման կապակցությամբ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական բողոքը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 7-րդ կետի **3-րդ** ենթակետի համաձայն՝ **դեղին ազդանշանն արգելում է երթևեկությունը** (բացառությամբ կանոնների 19-րդ կետով նախատեսված դեպքի) և նախազգուշացնում ազդանշանի առաջիկա փոփոխման մասին, իսկ նույն որոշման 7-րդ կետի 5-րդ ենթակետի, լուսացույցի կարմիր ազդանշանն, այդ թվում նաև՝ թարթող, արգելում է երթևեկությունը: Նույն որոշման 18-րդ կետի համաձայն՝ լուսացույցի (բացի դարձափոխայինից) կամ կարգավորողի արգելող ազդանշանի դեպքում վարորդը պետք է կանգ առնի «Կանգ-գիծ» գծանշման (կամ 6.16՝ «Կանգ-գիծ» նշանի) առջև, իսկ դրա բացակայության դեպքում՝ հատվող երթևեկելի մասի առջև՝ հաշվի առնելով կանոնների 93-րդ կետը, խոչընդոտ չստեղծելով հետիոտների համար, ինչպես նաև այլ վայրերում՝ լուսացույցի կամ կարգավորողի առջև՝ խոչընդոտ չստեղծելով

թույլատրելի ուղղություններով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտների համար: Նույն որոշման 19-րդ կետի համաձայն՝ դեղին ազդանշանը միանալու կամ կարգավորողը ձեռքը բարձրացնելու դեպքում այն վարորդները, որոնք հնարավորություն չունեն առանց կտրուկ արգելակելու կանգնել կանոնների 18-րդ կետում նշված տեղերում, կարող են շարունակել երթևեկությունը: Այդ ազդանշանի դեպքում երթևեկելի մասի վրա գտնվող հետիոտները պետք է ազատեն այն, իսկ եթե դա հնարավոր չէ, կանգ առնեն հանդիպակաց ուղղությունների տրանսպորտային հոսքերը բաժանող գծի վրա:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութի ուսումնասիրությամբ ակնհայտ է դառնում այն փաստը, որ 17.10.2020թ. ժամը 10:30-ին Երևան քաղաքի Հալաբյան - Արզումանյան - Հրազդանի կիրճ փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրած վայրում առկա է «Կանգ-գիծ» գծանշումը և դիմումատուի կողմից այն հատելու պահին միացված է եղել **լուսացույցի դեղին արգելող ազդանշանը**:

Այսպես՝ տեսանյութի 10:30:18-րդ վայրկյանին միանում է **լուսացույցի դեղին արգելող ազդանշանը**, երբ դիմումատուի տրանսպորտային միջոցը գտնվում էր «Կանգ-գիծ» գծանշման առջև: Դիմումատուի տրանսպորտային միջոցը «Կանգ-գիծ» գծանշումը հատում է տեսանյութի 10:30:20-րդ վայրկյանին՝ **լուսացույցի դեղին արգելող ազդանշանի առկայությամբ**: Փաստերի վերլուծության արդյունքում հերքվում է նաև դիմումատուի կողմից «Կառավարության 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 19-րդ կետի պահանջների ռեժիմում արարք կատարելու հանգամանքը, քանի որ դիմումատուն «Կանգ-գիծ» գծանշումը հատելուց առաջ գտնվել է կանգնած վիճակում, այսինքն դիմումատուն հնարավորություն է ունեցել կանգնել առանց կտրուկ արգելակման: Կատարված ուսումնասիրության արդյունքում հերքվել է նաև իրավախախտումը երթևեկության այլ մասնակցի գործողության հետևանքով կատարված լինելու հանգամանքը:

Այսպիսով, դիմումատուի արարքում ակնհայտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124.3-րդ հոդվածի 1-ին մասի զանցակազմը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 03.11.2020թ. թիվ 2011826901 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Աշոտ Կյուրեղյանին:



Ե. Կարապետյան